ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓԱՐԻԶՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

Ստեփան Ոսկանյանը (1825—1901 թթ.) մեր մշակույթի այն երախտավորներից է, որի կյանքը և մանավանդ հասարակական գործունեությունը լի են իրենց պարզաբանմանն սպասող «սպիտակ կետերով»։ Հենց այդպիսի մի «սպիտակ կետ» էլ հանդիսանում է նրա կյանքի 1846—1852 թթ. ժամանակահատվածը, երբ նա իր ծննդավայր Զմյուռնիայից մեկնեց Փարիզ, ուսումը շարունակելու համար, գործուն մասնակցություն ունեցավ 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանն ու 1849 թ. փարիզյան համաժողովրդական ցույցին, որի համար և բանտարկության դատապարտվեց։

Առաջին անգամ այս ամենի մասին գրեց Կարապետ Ութուջյանի «Մասիսը» 1859 թ., ըստ որում, իրողությունները ներկայացնելով որպես քաղաքական մեղադրանք Ոսկանյանի հասցեին։ «1848-ին,—գրում է «Մասիսը»,— հեղափոխությունը կը ծագի և անոր հետ՝ հավասարության (քոմյունիզմ) ու ընկերականության (սոցիալիզմ) աշխարհակործան սկզբունքները երևան կելլեն Գաղղիո մեջ։ Ս. Ոսկանյան այս վնասակար սկզբունքները քարոզող լրագիրներ ու դիրքեր կարդալով կաշակերտի անոնց ու ջերմեռանդ ջատագով մը կըլլա նույն սկզբունքներուն։ ...1849-ին հունիսի մեջերը Փարիզի ստորին կարգի ժողովրդյան մեկ մասը ապստամբական շարժում մը ընելով, Ս. Ոսկան դրոշակակիր հանդիսացավ անոնց»[1]։

Հետագա շրջանի Ոսկանյանի սակավաթիվ կենսագիրները, Ֆրանսիայի վերոհիշյալ դեպքերին նրա բերած մասնակցությունը հավանորեն անպատվաբեր դրվագ համարելով նրա կյանքո մ, գերադասել են կամ պարզապես չըխոսել այդ մասին, կամ էլ բավարարվել են մեկ-երկու հպանցիկ նախադասություն ասելով միայն։ Նույնիսկ Հրանտ Ասատուրը, Ոսկանյանի մասին ամենից ավելի լրջմիտ ու ամբողջական գիմաստվեր-կենսագրություն գրողը, 1846—1852 թթ. ամբողջ իրադարձությունների մասին նշում է միայն հետևյալը. «1852-ի պետական հարվածեն ետքը, երբ շատ մը ազատականներ Ֆրանսայեն վտարվեցան, Ստեփան Ոսկան ալ, որ մասնակցած էր 1848-ի և 1849-ի Փարիզի ռամկավարական ցույցերո ն, ստիպվեցավ պահ մը թողուլ Փարիզը»[2]։ Մոտավորապես այսքանն էլ կրկնվել է հետագայում, ընդհուպ մինչև մեր օրերը։ Մեր հրապարակախոսի կյանքի այս ժամանակահատվածի քննությունը, այսպիսով, դեռ մնում էր չկատարված։ Ներկա հոդվածը մի փորձ է այդ բացը գեթ մասամբ վերացնելու։

---

1 «Մասիս», 1859, № 387, հունիսի 25։

2 Հ ր. Ա ս ա տ ո ւ ր, Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 106։

1

Գոյություն ունեին հայազգի ծանոթ-բարեկամների մեկ-երկու հիմնական հանգրվաններ, որոնց ապավինելու Հույսով Ոսկանյանը 1846 թ. աշնանը ոտք էր դրել Ֆրանսիայի մայրաքաղաքը։ Դրանցից առաջինը Հարություն-Գարեգին Տատյանն էր, հետագայում հանրահայտ պետական գործիչ, Փարիզում Թուրքական դեսպանատան առաջին քարտուղար Գարեգին փաշան։ Վերջինս 1842 թ. հոկտեմբերին իր հոր՝ արքունի վառոդապետ Հովհաննես Տատյանի հետ միասին այցելել էր Զմյուռնիա, եղել էր Մեսրոպյան վարժարանում և այդտեղ էլ ծանոթացել Ոսկանյանի հետ. մի ծանոթություն, որը հետագայում վերածվել էր մտերմության։ Հիշյալ՝ 1846 թ. կեսերին. Հարություն-Գարեգին Տատյանը կատարելագործվելու նպատակով պատրաստվում էր ընդունվել Ալեքսանդր Լաբրուստի տնօրինության ներքո գտնվող «Սանտա Բարբառա» կամ կրճատ՝ «Սենտ Բարբ» անունը կրող դպրոցը, որտեղ իսկապես ընդունվեց 1847 թ. սկզբներին։ Ի բնե ունենալով մարդամոտ ու պարզ բնավորություն, Տատյան-որդին կարողացել էր իր բնակարանը մի տեսակ ժողովատեղի դարձնել պանդուխտ հայորդիների համար, որոնք տարբեր առիթներով սիրում էին հավաքվել այնտեղ։

Ոսկանյանի հաջորդ հանգրվանը Փարիզում իր ազգական Նուպարյաններն էին։ Իր ավագ որդուն՝ Նուպար Նուպարյանին Կահիրե ճանապարհելուց հետո Մկրտիչ Նուպարյանը մյուս որդու՝ Առաքելի հետ միասին 40-ական թթ. փոխադրվել էր Փարիզ, որտեղ կարողացել էր բավականին բարձր դիրք ու համարում ձեռք բերել։ Նուպարյանների ամբողջ ընտանիքը ֆրանսախոս էր և, նախնական պայմանավորվածության համաձայն, Ոսկանյանը Փարիզում պետք է հայերենի դասեր տար Առաքել Նուպարյանին և, միաժամանակ, նրա օգնությամբ կատարելագործեր իր ֆրանսերենը. մի բան, որն, ի դեպ, երկուստեք կատարվեց ջանասիրաբար։

Կային մի քանի հեռու-մոտիկ ծանոթություններ էլ, որոնք ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կարող էին օգտակար լինել։ Զմյուռնիայի ավագանին Ոսկանյանին էր տվել մի քանի նամակ-հանձնարարականներ, որոնցով նա Փարիզում պետք է ներկայանար իր համար նշանակություն ունեցող այս կամ այն անձնավորությանը։ Առաջին կարևոր ծանոթությունը տեղի ունեցավ Տատյանների բնակարանում, Ոսկանյանի՝ Փարիզ հասնելուց շուրջ երկու շաբաթ անց։ Այստեղ հանդիպելով Ալեքսանդր Լաբրուստին, Ոսկանյանը նախ նրան տվեց Ղուկաս Պալդազարյանի նամակ-հանձնարարականը, և ապա հայտնեց իր փափագ-ծրագիրը՝ ուսանելու համար ընդունվել «Սենտ Բարբ» և այն ավարտելուց հետո շարունակել ուսումը Ֆրանսիայի բարձրագույն հաստատության՝ Համալսարանի բժշկական կամ ինժեներական ֆակուլտետում։

Իր երկարատև մանկավարժական գործունեության ընթացքում առաջին դեպքը չէր, որ Լաբրուստը գործ էր ունենում հայազգի երիտասարդների հետ, սակայն այն, ինչին ականատես ու ականջալուր եղավ նա հանձինս Ստեփան Ոսկանյանի, վեր էր ամեն պատկերացրածից։ Գիտելիքների այն մեծ պաշարը, որը խոսակցության ընթացքում դրսևորեց Ոսկանյանը, եվրոպական և հատկապես ֆրանսիական գրականությանն ու արվեստներին նրա բաջատեղյակությունը, երևույթները գնահատելու, վերլուծելու ու ընդհանրացնելու նրա

ինքնուրույն, հաճախ համարձակ ունակությունը և վերջապես մաքուր, անսայթաք, փարիզյան առոգանություն ունեցող նրա ֆրանսերենը հիացրին Լաբրուստին։ Ուստի վերջինս անհապաղ գործի անցավ, իր տնօրինության ներքո գտնվող վարժարանում նրան պահելու համար։

Ստեփան Ոսկանյանի նկատմամբ Լաբրուստը ցուցաբերեց մոտավորապես այն վերաբերմունքը, ինչը նրանից մի որոշ ժամանակ առաջ մեր ականավոր դասականի՝ Խաչատուր Աբովյանի նկատմամբ ցուցաբերել էր Ֆրիդրիխ Գարրոտը։ Վերջինիս նման, Լաբրուստն էլ հանդեց այն եզրակացության, որ ամենն ինչ նորից-նոր սկսելու և հետևաբար իր սանին մյուսների նման առաջին ստորաբաժանում նստեցնելու կարիք չկա։ Պարզապես անհրաժեշտ էր որոշ սիստեմի բերել նրա գիտելիքները, լրացնել թերին, ավելի խորացնել այն ամենը, ինչ մակերեսային էր։ Այս մտայնությունից ելնելով էլ՝ նա որոշ առարկաների դասախոսների «կցեց» Ոսկանյանին, որոնց նա պետք է ունկնդրեր պարտադրաբար, իսկ մյուս առարկաների հանդեպ վերաբերմունքը թողեց նրա հայեցողության։ Միաժամանակ, սկսված գործն առավել ամբողջացնելու նպատակով, Լաբրուստը Ոսկանյանին վերահսկիչի (մոնիտեռ) պաշտոն տվեց «Սենտ-Բարպում», այսինքն՝ նա պարտավոր էր իր դասերից դուրս ֆրանսերեն պարապել վարժարանի ոչ ֆրանսիացի աշակերտների հետ (ի տարբերություն Ֆրանսիայի մյուս դպրոցների, որտեղ սովորելու համար կարող էին ընդունվել միայն ֆրանսիացիները, «Սենտ-Բարսլը» բացմազգյա էր) և հետևել նրանց վարք ու բարքին։ «Սենտ-Բարպ» վարժարանին մեջ ոչ բնակեր և ոչ աշկերտներու հետ խառնվեր ենք բնավ,— այս առիթով գրում էր Ոսկանյանը,— կը հաստատենք թե երբեք «Սենտ-Բարսլի» մեջ չմտանք իբրև աշկերտ և երբեք պարոն Լաբրուստը այդպիսի դիտավորություն մը չունեցավ մեզի համար։ Պարոն Լաբրուստ օր մը, պ[արոն] Գ[արեգին] Տատյանին սենյակը տեսնելով զմեզ ու մեր լեզվագիտությունը և ուսումնասիրությունը նշմարելով, հաճեցավ թեթև պաշտոն մը տալ մեզ վարժատունեն դուրս։ Արդարև այս մեծ բարերարություն մ՝ էր և ամեն դյուրություն կուտար ուսումներու ղբաղիլ Սորբոնի, Քոլեժ դը Ֆրանսի, Քոնսերվաթուար դեզ Ար է Մեթիեյի մեջ»[3]։ Հիշատակված ֆրանսիական երեք ուսումնական հաստատությունների՝ Սորբոնի, Կոլեժ դը Ֆրանսի և Արվեստների ու գիտությունների կոնսերվատորիայի (Ոսկանյանն օգտագործել է այս վերջինի ֆրանսիական անվանումը Conservatoire des Arts et Metiers) մասին դեռ խոսք կլինի։ Մեզ համար այստեղ կարևորը այն գործունեության բացահայտումն ու ճշգրտումն է, որը Ալ. Լաբրուստի անմիջական հսկողության ներքո ծավալել էր Ոսկանյանը «Սենտ-Բարպում»։

Կոնկրետ ո՞ր առարկաներն էին, որոնք պարտադիր էին նորընծա վերահսկիչի համար և հետևաբար որ դասերն էր, որոնց նա անհրաժեշտաբար պետք է մասնակցեր, ցավոք հայտնի չէ։ Ելնելով այն փաստից, որ «Սենտ-Բարպի» մասին հրատարակած իր մի հոդվածում[4] Ոսկանյանը առաջին հերթին հիշատակում է ճշգրիտ առարկաներն ու նրանց դասավանդությունը, դրվատանքով է արտահայտվում «սկզբունք ուսողության» (իմա՝ մաթեմատիկա), բնական գիտության, «տարրաղննության» (իմա՝ քիմիա) առարկաների

3 «Արևմուտք», 1859, № 17, էջ 150։

4 «Արշալույս Արարատյան», 1847, № 298։

մասին, ոչ մի խոսք չասելով վարժարանի մյուս դասախոսների վերաբերյալ, շտապում է սակայն ծանուցանել, որ այնտեղ է ավանդում «Սթուրմ մաթեմատիսիեն», որն, ի դեպ, շարքային մեծություն էր կիրառական մաթեմատիկայի բնագավառում,—այս բոլորից պետք է ենթադրել, որ Ոսկանյանի համար պարտադիր էր հիշյալ առարկաների դասավանդությունը։ Այս ենթադրությանը ուժ է տալիս նաև այն հանդամանքը, որ Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում, որի շրջանավարտն էր նա, այդ բնույթն ունեցող առարկաներին երկրորդական-երրորդական տեղ էր հատկացված և, բնականաբար, Ոսկանյանը պետք է աշխատեր լրացնել հատկապես այդ պակասը, բժշկական, առավել ևս ինժեներական ֆակուլտետ ընդունվել կարողանալու համար։

Հակումը դեպի ճշգրիտ գիտությունները և բժշկի կամ ինժեների մասնագիտություն ձեռք բերելու Ոսկանյանի սկզբնական նպատակադրվածությունը ուներ իր սոցիալական խորագնա պատճառները։ Տարիների փորձը արդեն սովորեցրել էր հայերին, որ բռնապետական այնպիսի մի երկրում, ինչպիսին օսմանյան կայսրությունն էր, որտեղ օրենքները միայն նրա համար էին, որպեսզի ավելի հիմնավոր դարձնեին ոչ մուսուլման ազգերի նկատմամբ ամեն մի կողոպուտ ու վայրագություն, գոյատևելու համար քիչ թե շատ կայուն միջոցներ կարող էին ապահովել միայն ճշգրիտ մասնագիտությունները։ Այսպիսին էր անագորույն պայմանների արդյունք հանդիսացող դաժան օրինաչափությունը, և Ոսկանյանն էլ, հասկանալի է, չէր աշխատելու բացառություն կազմել։

Շատ ծանրաբեռնվածություն և ֆիզիկական ոչ մտավոր կարողությունների մեծ լարում չէր պահանջում «Սենտ-Բարպի» հայազգի վերահսկիչից իր պարտականությունների կատարումը։ Եվ բնականորեն, Ոսկանյանը անհապաղ պետք է ձեռնամուխ լիներ իր ուսման թերին ու բացթողածը լրացնելու Փարիզի մյուս ուսումնական հաստատություններում։ Հենց այսպիսի մի կրթական օջախ էր հանդիսանում վերևում հիշատակված Արվեստների ու գիտությունների կոնսերվատորիան[5], որտեղ ուսանելու մասին, ինչպես տեսանք, վկայում է հենց ինքը։ XVIII դարի առաջին կեսին հիմնադրված և սկզբնական շրջանում արդյունաբերական-մեքենագիտական ցուցահանդես-թանգարան հանդիսացող այս հաստատությունը XIX դարի ընկրզբներից սկսեց մեծ անուն ու հեղինակություն ձեռք բերել այն պատճառով, որ 1819 թ. սկսած, իրենց մոտ եղած ցուցանմուշների հենքի վրա (ունեին շուրջ 11 հազար ցուցանմուշ) այնտեղ սկսվել էին գիտա-հանրամատչելի բնույթի հրապարակային դասախոսություններ։ Դա հենց այն էր, ինչ անհրաժեշտ էր Ոսկանյանին, որովհետև նախ՝ դասախոսություններն անվճար էին և երկրորդ՝ դասավանդվում էին այն առարկաները (նկարագրական և արդյունաբերական երկրաչափություն, կիրառական մեխանիկա, քաղաքացիական ճարտարապետություն, ֆիզիկա, մետալագիտություն, էլեկտրատեխնիկա և այլն), որոնց բնագավառում նրա գիտելիքները առանձնապես թերի էին։ Եվ եթե ավելացնենք, որ Կոնսերվատորիան հիմնականում դոր-

5 Այստեղ և հետագայում, ուսումնական այդ հաստատության անունը ճիշտ տալու նպատակով պահպանում ենք Կոնսերվատորիա բառը, գիտակցելով իհարկե, որ այն չունի այսօրվա իմաստն ու նշանակությունը։

ծում էր աշնան-ձմեռային ամիսներին, իսկ Ոսկանյանը, ասացինք արդեն, Փարիզ էր եկել 1846 թ. աշնանը, ապա դժվար չէ դալ այն եզրակացության, որ առաջին հերթին այս հաստատությունն էր, որտեղ հաճախելու էր նա։

Եթե Կոնսերվատորիայում լրացվելու էին Ոսկանյանի գիտելիքները ճշգրիտ գիտությունների բնագավառում, ապա Ֆրանսիայի մյուս ականավոր կրթական հաստատությանը՝ Կոլեժ դը Ֆրանսին, որտեղ հաճախում էր նա նախորդի հետ հավասարեն միաժամանակ, կամ գուցե փոքր-ինչ հետո, արդեն բոլորովին այլ դեր ու խնդիրներ էին վերապահված։ Իր հիմնադրման սկզբից իսկ (1530 թ.) սույն հաստատությունը հումանիտար-էսթետիկական-փիլիսոփայական բնույթ ուներ և չնայած հետագայում (1800-ական թթ.) այնտեղ բնական գիտությունների ամբիոն բացվեց, բայց դրանից Կոլեժ դը Ֆրանսի ընդհանուր ուղղությունը չփոխվեց։ Եվ եթե չմոռանանք, որ Ֆրանսիայի բոլոր ուսումնական հաստատությունների համեմատությամբ Կոլեժ դը Ֆրանսը աչքի էր ընկնում իր ամենալայն դեմոկրատական բնույթով (բոլոր դասախոսություններն անվճար էին, յուրաքանչյուր ոք առանց սեռի, տարիքի, կրթության և ազգության խտրության կարող էր հաճախել ցանկացած դասախոսությանը, ուսանողների համար գոյություն չունեին ոչ մի տիպի քննություններ ու ստուգարքներ և այլն), ապա ըմբռնելի կդառնա, թե ինչու Ոսկանյանը չպետք է աչքաթող աներ ուսումնական այս հիմնարկը։

Ի՞նչ դասախոսությունների էր հաճախում Ոսկանյանը Կոլեժ դը Ֆրանսում։ Այս հարցին քիչ թե շատ բավարար պատասխան տալու օգնում է հենց ինքը։ Վաղուց ասված-կրկնված է, որ Փարիզում ուսանելու տարիներին նա լսել էր Միշլեի, Կինյեի, Ժյուլ Սիմոնի և Կուզենի դասախոսությունները, որոնցից մի քանիսի հետ նույնիսկ անձնական մտերմություն է ունեցել[6]։ Արդ՝ Ֆրանսիայի գիտական պարծանքը հանդիսացող վերոհիշյալ դասախոսներից առաջին երկուսը հենց դասախոսում էին Կոլեժ դը Ֆրանսում։ Ժյուլ Միշլեն, որն այդտեղ էր հրավիրվել դեռ 1838 թ. ընդհանուր պատմություն ավանդելու համար և Էդգար Կինյեն, որը Կոլեժ դը Ֆրանսում էր 1840-ից և ավանդում էր փիլիսոփայության պատմություն, օգնում են մեզ բավական բան պարզելու։ Իմանում ենք նախ, որ Ոսկանյանը Կոլեժ դը Ֆրանս էր հաճախում իրոք տեսական-փիլիսոփայական բնույթի պատրաստություն ու զարգացում ստանալու համար։ Իրազեկ ենք դառնում ապա, որ նրա միտքը ձևավորող Ժյուլ Միշլեն ու Էդգար Կինյեն էլ հենց, պետք է նրան ներարկած լինեին հավասարության, ազատության, ազատությունը կռվով պաշտպանելու, միապետականության հանդեպ ատելության և նրան տապալելու համար պատրաստակամ լինելու այն գաղափարաբանությունը, որի ջատագովն ու մունետիկն էր դառնալու հետագայում։ Իզուր չէր, որ թե՛ Միշլեի, և թե՛ Կինյեի դասախոսությունները մշտապես աչքի էին ընկնում իրենց ազատախոս բնույթով և ի վերջո, նրանց երկուսին էլ այդ պատճառաբանությամբ հեռացրեցին Կոլեժ դը Ֆրանսից։ Իմանում ենք վերջապես, որ Ոսկանյանի գաղափարական զարգացումն ու հասունացումը սկսվեց Կոլեժ դը Ֆրանսում և հենց այս հաստատ-

6 Բանաստեղծ Խ. Դարիկյանը Ոսկանյանին նվիրված իր հոդվածի մեջ (տե՛ս «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1955, էջ 126) նշում է, որ Կոլեժ դը Ֆրանսում Ոսկանյանը հետևել է նաև «լեհ քերթող Միցրկիչի դասերուն»։ Փաստն ընդհանրապես շատ հավանական է, բայց այդ պնդումը հավաստող որևէ այլ տվյալ մենք չկարողացանք գտնել, իսկ Դարիկյանը ոչ մի աղբյուր չի հիշատակել։

տությունն էր, որ լիցքավորեց ու քաղաքական կողմնորոշում տվեց նրան ֆրանսիական հեղափոխության հանդեպ։ Հանրահայտ է, որ Ֆրանսիայի կրթական այս հաստատությունը մշտապես հռչակված է եղել իր հակաբոնապետական տրամադրություններով։ Իսկ քանակական այս կուտակումների որակական փոփոխությունն այն եղավ, որ Ոսկանյան-ուսուցչից, Ոսկանյան-ուսանողից աստիճանաբար կազմակերպվեց Ոսկանյան-քաղաքական գործիչը։

Ոսկանյանի հասարակական-քաղաքական գործունեության նախակրապետները նկատվում են դեռ 1847 թ., գուցե և փոքր-ինչ ուշ, երբ նա սկսում է թղթակցել հրապարակախոս Արման Կարելի և պատմաբան Լուի Տիերի հիմնադրած «Նասիոնալ» օրաթերթին։ «Նասիոնալը» գոյություն ունեցավ մինչև 1851 թ. վերջը, և ուրեմն, Ոսկանյանը այդ թերթին թղթակցում էր ամբողջ չորս տարի։ Ինչ էր գրում նա՝ չգիտենք. այդ հոդվածներից առայժմ ոչ մեկը չունենք ձեռքի տակ։ Ակնարկներ կան, որ այդ ժամանակներից իսկ նա աշխատակցում էր Լեդրյու Ռոլենի հիմնադրած «Ռեֆորմ» պարբերականին[8]։ Վերջին փաստը, որքան էլ ճշգրտման կարիք ունենա, հեռու չէ հավանականությունից, որովհետև երկու պարբերականներն էլ գրեթե միանման քաղաքական գիծ ունեին և ինչպես 1848 թ. ֆրանսիական բոլոր մեծ ու փոքր իրադարձությունների, այնպես էլ դրանց նախորդած դեպքերի հանդեպ գրեթե նույն մոտեցումն էին մշակել։ Այդ քաղաքական գիծը կարելի է բնութագրել մոտավորապես հետևյալ կերպ. տապալել Լուի-Ֆիլիպի՝ ֆրանսիացիների համար ատելի դարձած միապետությունը և դեմոկրատական, համընդհանուր ընտրությունների հիման վրա ստեղծել հանրապետություն։

Քաղաքական այսպիսի կողմնորոշում ունեցող «Նասիոնալում» (գուցե և «Ռեֆորմում») էր ահա, որ սկսել էր հանդես գալ Ոսկանյանը և այս հանգամանքը, հասկանալի է, անիմաստ պատահականություն լինել չէր կարող։ Դա նշանակում էր, որ երիտասարդ հրապարակախոսը ոչ միայն պետք է համակրեր այդ պարբերականների որդեգրած ծրագիր-քաղաքականությանը, այլև անհրաժեշտության դեպքում՝ հանդես գար այդ քաղաքականությունը պաշտպանողի դերում։ Եվ հարաճուն կերպով զարգացող իրադարձությունների հետագա ընթացքը եկավ հենց այդ ապացուցելու։

Իրադարձությունները ծայր առան 1847 թ. վերջերից, երբ Լուի-Ֆիլիպը թագավորը կամեցավ ըստ իր հայեցողության փոփոխություններ մտցնել Ֆրանսիայի ընտրական օրենսդրության մեջ այն հաշվով, որ դեպուտատների թեկնածությունների առաջադրման, նրանց ընտրության և նման բնույթի այլ հարցերի վերաբերյալ վճռական ձայնը, ի վերջո, վերապահվի իրեն։ Հարցն առանձնապես սրվեց այն բանից հետո, երբ ի պատասխան Լամարթինի՝ այդ ամենի վերաբերյալ արված հարցապնդմանը, Լուի-Ֆիլիպը տվեց «անում եմ ինչ նպատակահարմար եմ գտնում» անհեռատես պատասխանը։ Ամեն ինչ լրացավ 1848 թ. փետրվարի սկզբներին, երբ «Նասիոնալը» տապ-

---

7 Տե՛ս «История XIX века (под ред. Лависса и Рамбо)», М., 1938, т. 3, էջ 407—413; «История Франции в 3-х томах», т. 2, М., 1973, стр. 550—663 (гл. «Посвящение»).

8 Ոսկանյանին նվիրված մի հոդվածում «Բյուզանդիոնը» (1901 թ. № 1346) տեղեկացրեց, որ այս ժամանակաշրջանում նա թղթակցել է նաև «Կոնստիտուսիոնել» լրագրին։ «Կոնստիտուսիոնելի» որևէ համար անկարելի եղավ գտնել մեր և Միության գրապահոցներում, իսկ այս փաստը վավերացնող ուրիշ վկայություն չկարողացանք գտնել։

նապալից հաղորդում հրապարակեց այն մասին, որ կառավարությունը հրաման է տվել զորքերի և Ազգային գվարդիայի ընդհանուր հրամանատար Թոմաս-Ռոբեր Բյուժոյին բանակը մարտական վիճակի մեջ դնելու և այս կապակցությամբ ռազմական նախնական պատրաստություններն սկսելու մասին։ Փարիզի գործավոր դասակարգը արդեն լցված էր թագավորի և նրա վարած ձախուժուռ քաղաքականության դեմ։ Առիթը առավել քան հարմար էր վերաբերմունք դրսևորելու համար և սկսվեց այն մեծ իրողությունը, որը պետք է կազմեր Ֆրանսիայի պատմության ամենափայլուն էջերից մեկը[9]։

Ժողովրդական լայն զանգվածների պայքարը ղեկավարելու, այդ պայքարին ուղղություն հաղորդելու գործում իրենց որոշակի դերն ունեին «Նասիոնալ» և «Ռեֆորմ» թերթերը։ Երկուսի համատեղ ջանքերով արդեն ստեղծվել էր իրենց «Կլուբը»՝ այժմյան տերմինով ասած՝ շտաբ-խմբագրությունը, որտեղ մշտապես հավաքվում էին Դյուպոն դը Լ'Էրը, Արագոն, Լամարթինը, Լեդրյու-Ռոլենը, Կրեմյոն և էլի ուրիշներ։ Ինչ դեր ուներ Ոսկանյանն այստեղ՝ ցավոք չգիտենք. հայտնի է միայն, որ նա անձամբ ծանոթ էր Կլուբի անդամներից՝ Լամարթինի և Արագոյի հետ, ըստ որում ծանոթությունը վերջինիս հետ հասնում էր մտերիմ բարեկամության։

Իր անելիքներն ավելի լավ պարզաբանելու նպատակով Կլուբը աշխատանքի հետևյալ բաժանումն էր սահմանել։ Նրա անդամներից մի քանիսը (օրինակ՝ Լամարթինը, Լեդրյու-Ռոլենը, Դարնիե-Պաժեսը) հանդես էին գալիս Ազգային խորհրդում պալատի զանազան նիստերում, որտեղ առաջ էին քաշում գերազանցապես այն հարցերը, որոնք իրենց էջերում բարձրացնում էին «Նասիոնալն» ու «Ռեֆորմը»։ Կլուբի անդամների մյուս մասը նույնն անում էր անմիջապես ժողովրդի մոտ՝ հրապարակներում, այգիներում, փողոցների խաչմերուկներում։ Առաջինները նույնիսկ պաշտոնապես ու պաշտոնական գրականության մեջ կոչվում էին «պալատական հրապարակախոսներ» կամ ֆրանսերեն՝ «օրատոր դը պալե», իսկ երկրորդները ստացել էին «խաչմերուկային հրապարակախոս», ֆրանսերեն՝ «օրատոր դը կարֆուր» անվանումը։ Արդ՝ փաստերի քննությունը մեզ հանգեցնում է խիստ կարևոր այն եզրակացության, որ Ոսկանյանին վստահված էին ժողովրդական մասսաներին տեղի ունեցող իրադարձությունները բացատրելու ու նրանց պայքարի կոչելու, այսինքն՝ «օրատոր դը կարֆուրի» պարտականությունները։

Ոսկանյանի այս «պաշտոնի» մասին առաջին անգամ գրեց Պոլսի «Մասիս» օրաթերթը 1859 թ., երբ ի թիվս նրա կատարած «հայի անունը խայտառակող» արարքների, նշվեց վերևում ասվածը հավաստող հետևյալը. «Ստեփան Ոսկանյան այնուհետև բոլորովին ինքնագլուխ ու ամեն նկատմունքե աղատ մնալով, փողոցներու ատենաբան (օրաթեոր դը քարֆուր) մը եղավ, գոեհիկ ընկերականաց ժողովակներու (քլուպ) անդամ եղավ, փողոցներուն մեջ ընկերականություն ու տերության դեմ ապստամբություն քարոզել սկսավ»[10]։ Եվ որ մեզ համար ոչ պակաս կարևոր է, իր «Քսանչորս ստուգություն» պատասխանով հանդես գալով «Մասիսում» տպագրված հիշյալ հոդվածի դեմ, կետ առ կետ հերքելով իր վրա բարդվող դանդաղ մեծ ու

---

9 См. К. Маркс, «Классовая борьба во Франции с 1848 по 1850 г.». Маркс и Энгельс, Соч., т. 7, М., 1956, стр. 8—32.

10 «Մասիս», 1859, № 387։

փոքր «ստությունք»-ները, Ոսկանյանը, սակայն, ամենևին չհերքեց այս մեղադրանքը, չհերքեց 1848 թ. փետրվարի օրերին իր՝ «փողոցներու ատենաբան» և հետևաբար՝ «տերության դեմ ապստամբություն քարոզող» լինելը։

Եվ այսպես, Փարիզում, 1848 թ. փետրվարյան օրերին, քսաներեքամյա հրապարակախոսը պայքարի ու կռվի էր կոչում ժողովրդին։ Նա բացատրում ու պարզաբանում էր շատերին, որ դառնալով Ֆրանսիայի թագավոր (1830 թ. օգոստոսի 9), Լուի-Ֆիլիպը, հնարավոր է, թագավորական դեմոկրատիզմի սահմաններում որոշ բարեփոխումներ կատարեց երկրում, բայց հետագայում և մանավանդ 1840-ական թթ. սկսած, նա աստիճանաբար վերածվեց իսկական բռնապետի, անհոգի ու ժանտ մի տիրակալի, որի իմացած միակ ձևը գործավոր դասակարգի հետ խոսելու համար բռնությունն է ու զենքը և հետևաբար պետք է անհապաղ տապալել նրան։ Բացատրում էր ու պարզաբանում, որ Ֆրանսիան իր հասարակական պատմության ընթացքում ունեցել է բոլոր տեսակետներից ավելի բանական մի ժամանակաշրջան՝ 1789 թ., երբ, ի պատասխան Լյուդովիկոս XIV թագավորի նմանատիպ բռնակալական նկրտումների, ապստամբած ժողովուրդը գահազուրկ արեց նրան, ստեղծելով իր ժողովրդա-դեմոկրատական վարչակարգը, իսկ Բաստիլի գրավման ու կործանման ակտով (1789 թ. հուլիսի 14) ամբողջ աշխարհին ցույց տվեց, թե ինչ կարող է անել ֆրանսիացին, երբ ճնշում են նրա ազատությունը և որ այժմ, այսինքն 1848 թ. էլ պետք է անել այն, ինչ արվել է 1789 թ.։ Քսաներեքամյա հայ հրապարակախոսը բացատրում էր ու պարզաբանում, որ ոչ մի ժամանակ ազատություն խորհրդանշող Ֆրանսիան և ազատաբաղձ ֆրանսիացիները չեն եղել այնքան ցածր, այնքան աննախանձելի վիճակում, ինչպես այժմ, այսինքն 1848 թ. և դրա համար մեղավոր են Լուի-Ֆիլիպ թագավորն ու նրա կարճամիտ մինիստրները, որոնք պետության ու ժողովրդի շահերը մի կողմ թողած, զբաղված են շռայլ բանկետներով, բաժակաճառ հիշեցնող ուղերձներ հղելով, թագավորական ցեղի մեծ ու փոքր զարմուհիների համար փեսացուներ ընտրելով։

Այսպիսին էր, քիչ ավել կամ քիչ պակաս, Ոսկանյան-հրապարակախոսի կամ ֆրանսերեն տերմինով ասած՝ Ոսկանյան-«օրատոր դը կարֆուրի» գործունեության բնութագիրը Փարիզում, 1848 թ. փետրվարյան նշանավոր օրերին. մի գործունեություն, որի մասին ներքին հպարտությամբ ազդարարում է հենց ինքը. «Փետրվարի ազատության առաջին որոտումը,— գրում է նա,— մեր վրայեն արևելյան գերության մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզ նետեց»։ Կամ. «...ապստամբ բառը մեր երեսին տվին (հայազգի իր «բարեկամները»—Ս. Շ.) իբրև կեղտ ու ամոթ և կարծեցին, որ պիտի «խայտառակվինք»։ Ձե՜վզեկները մեզ գովություն տվին։ Այո՛ ապըստամբ ենք, այսինքն 89 (իմա. 1789—Ս. Շ.) վեհ թվականը կը սիրենք հոգով և մարմնով»[11]։

Այսպիսի վկայակոչումներ կարելի է էլի բերել, ցույց տալու համար, որ «Նասիոնալ» թերթի Կլուբը իրոք կարողացել էր գտնել հատկապես այդ գործի համար կոչված ու իր անելիքները լավ իմացող թեկնածուի, մեկին, որը

11 «Արևմուտք», 1859, № 17, էջ 132, 159։

կարող էր թերթում արծարծվող գաղափարները հասցնել ժողովրդական զանգվածներին։

Իսկ պատմական դեպքերը զարգանում էին մեծ արագությամբ...

Իր սեփական ուժերի վրա չափից ավելի վստահ լինե՞լն էր պատճառը, թե՞ այդ ուժերի ռեալ վիճակի նկատմամբ անտեղյակությունը, որ ընդհանուր զորահրամանատար Բյուժոն, զայրացած ու վրդովված մայրաքաղաքում ծայր առած «անկարգություններից», 1848 թ. փետրվարի 22-ին հրամայեց կրակել Ելիսեյան դաշտում հավաքված շուրջ քսան հազար ցուցարարների վրա։ Կրակոցների փոխարեն տեղի ունեցավ Ազգային գվարդիայի զինվորների ու ցուցարարների մասսայական եղբայրացում, որն ավարտվեց նրանով, որ զինվորներն իրենց զենքը տվեցին ապստամբներին։ Ժողովրդական զանգվածների խռովքը կասեցնելն այլևս հնարավոր չէր, իսկ թագավորական Տյուիլրի պալատը պաշտպանող զինվորների անկազմակերպ դիմադրությունը սոսկ յուղ լցրեց կրակի վրա։ «Մարսելյոզը» շուրթերին և զենքը ձեռքին ապստամբները տրորեցին իրենց ցույց տրվող ամեն տիպի դիմադրություն և երկու օր անց, փետրվարի 24-ին, հաղթական բացականչություններով խուժեցին Տյուիլրիի պալատը, ջարդելով ու պատուհաններից դուրս նետելով այն ամենը, ինչ հիշեցնում էր ատելի թագավորին, նրա կառավարությունը, նրա մերձավորներին[12]։

Ամբողջ այս իրադարձությունների առաջին շարքերում էր և ապստամբների հետ միասին արքայական պալատը մտնողների մեջ էր նաև Ստեփան Ոսկանյանը. այս կապակցությամբ նրա հպարտ հայտարարությունը որևէ վերապահության տեղիք չի տալիս. «Այո,— գրում էր նա,— Լուի-Ֆիլիպին դեմ ապստամբողներու հետ էինք, այո, ըրինք ազատության համար ինչ որ ամեն մարդու պարտքն էր ընել և զեն ի ձեռին Թյուիլրի մտնելու պատիվը ունեցանք»[13]։

Փետրվարի 24-ը եղավ Լուի-Ֆիլիպի անփառունակ թագավորության վերջին օրը։ Նույն օրը «Նասիոնալի» Կլուբը կազմեց դեպուտատության թեկնածուների իր ցուցակը (Դյուպոն դը լ'Էր, Արագո, Լամարթին, Լեդրյու-Ռոլեն, Կրեմյո, Մարի, Գարնիե-Պաժես), «Ռեֆորմը» նույնությամբ վավերացրեց այդ կազմը, հավելելով միայն Ֆլոկոնի («Ռեֆորմի» պատասխանատու քարտուղարը) և մեքենագործ-բանվոր Ալբերի անունները և մի օր անց Ֆրանսիան հայտարարվեց հանրապետություն, իսկ հիշյալ անձինք՝ նրա մինիստրները։

2

Ֆրանսիայի հայազգի հրապարակախոսին ու ապստամբության շարժման մասնակցին նորից հանդիպում ենք մոտ տարի ու կես հետո, 1849 թ. հունիսի 13-ին, դարձյալ ցույցի և դարձյալ ցուցարարներին կազմակերպելու առիթով։ Այս անգամ ցույցը կազմակերպել էին ուսանողները, ի նշան բողո-

---

12 Տե՛ս «История XIX века (под ред. Лависса и Рамбо)», М., 1938, т. 5, էջ 6—41. Е. Тарле, Жерминаль и прериаль (III изд.), М., 1957, стр. 300—350

13 «Արևմուտք», 1859, № 17, էջ 132։ Ավելորդ չենք համարում նշել, որ «Տարազը», օգտվելով մեզ անհայտ աղբյուրից, ժամանակին հրապարակել է հետևյալ տեղեկությունը. «Ոսկանյանը... 1848 թ. ֆրանսիական հեղափոխության մեջ մասնակցելիս ծանր վերք էր ստացել» («Տարազ», 1901, № 13)։

քի այն ավանտյուրիստական պատերազմի, որը վարում էր կառավարությունը ընդդեմ Իտալիայի և որ ամենազավեշտականն է, պատերազմը մղվում էր «Իտալիան փրկելու», «Իտալիան ազատելու» պատրվակով։ Ցույցն, այսպիսով, քաղաքական բնույթ ուներ և անհամեմատ ավելի համեստ նպատակներ էր հետապնդում։ Դա, սակայն, չխանգարեց Փարիզի Ազգային գվարդիայի նորընտիր հրամանատար, գեներալ Նիկոլայ-Թեոդուլ Շանգարնիեին, որն այդ պաշտոնին էր նշանակվել 1848 թ. դեկտեմբերին և որը առանձնապես ջանում էր աչքի ընկնել կառավարության առջև, անողոք դաժանությամբ ցրելու ցույցը, հրազենից բացի կիրառելով բոլոր մյուս միջոցները (խզակոթ, մտրակ, ծեծ, ձիերի ոտքերի տակ տրորել), որոնք գտնվում էին իր իրավասության ներքո։ Մեզ համար կարևոր է այն փաստը, որ Ոսկանյանի դերը այստեղ էլ երկրորդական չէր։ Նա քայլում էր ցուցարարների առաջին շարքերում։ «Ուսանողք միագունդք ժողովելով և դրոշը առնելով սկսան պուլվարներու վրայեն դեպի Ազգային ժողովը ուղղվիլ,— գրում էր նա։— Կրոնական կողմը այս բողոքի շարժումը զրպարտելով և ազգային զորքը անկե խաբվելով, սկսավ ուսանողներու դեմ դնիլ և պզտի ընդդիմութենե մը ետև ցրվեց զանոնք։ Աղերսագիր տանող բազմության դրոշակակիրը մեր բարեկամներե մեկն էր և որովհետև իր քով կը գտնվեինք, դրոշակը մեր ձեռքը անցավ շփոթին մեջ և կարող եղանք զայն պաշտպանելու իբրև ուսանող և ոչ իբրև մարտիկ ապստամբ»[14]։

Ուրեմն. 1848 թ. փետրվարի 22—24-ի իրադարձություններին Ոսկանյանը մասնակցում էր՝ ձեռքին զենք ունենալով և Տյուիլրիի արքայական պալատը մտնելով։ 1849 թ. հունիսի 13-ի ուսանողական-քաղաքական ցույցին Ոսկանյանը մասնակցում էր՝ ձեռքին դրոշակ ունենալով և «շփոթին մեջ զայն պաշտպանելով»։ Փաստերն այնքան պերճախոս են և այնպիսի դեղեցիկ բնութագրական գծեր են ավելացնում Ոսկանյանի կյանքի այս ժամանակահատվածի վրա, որ ավելին դժվար կլինի ենթադրել անդամ։

Իհարկե, ամեն ինչ այսքանով չավարտվեց։ Գեներալ Շանգարնիեն, իսկապես, հիմնավոր հետևողականությամբ էր ձեռնամուխ եղել իրեն վստահված գործը մինչև վերջ հասցնելուն, ուստի ցույցը ցրելուց հետո հրամայեց ձերբակալել ինչպես կազմակերպիչներին, այնպես էլ գործուն մասնակիցներին։ Եվ մի քանի օր անց, Շանգարնիեի գործակալները, ի թիվս այլոց, ձերբակալեցին նաև Ոսկանյանին։ Ինչ-որ տեղ, իհարկե, այդ ձերբակալությունը շատ էլ իմաստալից չէր, որովհետև ֆրանսիական կառավարությունը դեռ մի քանի տարի առաջ օրենք էր ընդունել, ըստ որի օտարականները, եթե նրանք մասնակցություն են բերում հակապետական բնույթ ունեցող թեկուզև ամենախոշոր իրադարձություններին (բացառությամբ դիտավորյալ սպանությունը, զինված կողոպուտը) մեղավոր չէին ճանաչվում և ազատ էին արձակվում։ Ոսկանյանն օտարական էր, և, բնականաբար, այս օրենքը ուղղակիորեն առնչվում էր նրա հետ։ Չնայած դրան, վերջինս բանտում մնաց շուրջ երկու ամիս, ավելի կոնկրետ՝ 54 օր...

1849 թ. աշնանը Ոսկանյանն ազատվեց բանտից և պատրաստվեց անցնելու իր նախկին գործերին։ Բայց ավա՜ղ, շատ բան էր փոխվել...

---

14 «Արևմուտք», 1859, № 17, էջ 132։

«Փոխվածներից» առաջինը հայր և որդի Տատյաններն էին։ Հեռատես էր և խորամանկ Տատյան-հայրիկը։ Նա իսկույն կռահեց, որ իր որդու՝ Հարությունի-Գարեգին Տատյանի մտերմությունը այնպիսի «վտանգավոր» մեկի հետ, ինչպիսին էր Ոսկանյանը, ոչ միայն լավ բան չէր կարող խոստանալ, այլև կարող էր չարիքների դուռ բանալ և առնդմիշտ խորտակել որդու ապագան։ Եվ նա անհապաղ որդուն ուղարկեց Պոլիս, հարազատների մոտ, մանավանդ որ այդ անելու հրաշալի փաստարկ կար. որդին արդեն ավարտել էր «Սենտ-Բարպը»։ Ի՞նչ սովորեց որդին «Սենտ-Բարպում», քանի որ նա այնտեղ մեկ տարուց էլ պակաս մնաց (Հարություն-Գարեգին Տատյանը ավարտեց 1848 թ. հունվարի 31-ին), իսկապե՞ս ավարտեց այդ հաստատությունը, թե այստեղ էլ «օգնեց» ամենակարող հայրիկը, ի՞նչ տպավորություն կթողներ այդ բոլորը Փարիզի ու Պոլսի համազգիների վրա,— այդպիսի անհարմար հարցեր իրեն չտվեց Առաքել Տատյանը։ Նա 1848 թ. ընկերներին, այսինքն հեղափոխությունից բառացիորեն մի քանի օր առաջ որդուն վտխցրեց Փարիզից և աներկմտորեն հասկացրեց նրա մոտ հաճախակի հավաքվող ծանոթ-ընկերներին, որ ամեն ինչ արդեն ավարտված է։

Այդ նույն պատճառաբանությամբ էլ՝ Ոսկանյանին դեմ էին տրամադրվել նրա ազգականները՝ Նուպարյանները։ Հանրահայտ այս մեծահարուստները, որոնք Փարիզում է՛լ ավելի էին ընդարձակել իրենց գործարար կապերն ու Ֆրանսիայի հասարակական-պետական այլևայլ անձանց հետ ունեցած իրենց ծանոթությունները, հասկանալի է, որ Ոսկանյանի պես «խռովարարին» պետք է հնարավորին չափ շուտ հասկացնեին, որ նա շատ էլ հաճելի մարդ չէ իրենց համար։ Այս առիթով էր, ահա, որ Ոսկանյանը պետք է որոշակիորեն բացաղատվեր նրանցից և հրապարակավ ազդարարեր իր հավատամքը. «Միտքով տարբեր էինք, բնակությունով հեռու կապրեինք, անոնք կբարձրանային, մինչև փաշաներու աստիճան կելնեին, մենք կիջնեինք մինչև ռամիկներու կարգը, ուր տեսանք, օր մը, ազատության սիրաբույր դեմքը, որ մեր կյանքին երաղն էր մանկութենեն ի վեր»[15]։ Տատյանների ու Նուպարյանների հետ այս խզումը վերջնական եղավ։

Ոսկանյանին գնահատող և նրան ճիշտ հասկացող մեր նշանավոր դեմքերից միայն մեկին գիտենք. դա Հովսեփ Շիշմանյանն էր, հանրահայտ Մեռենցը։ Վերջինս Փարիզ էր եկել 1848 թ. փետրվարի կեսերին, անձամբ ականատես էր եղել փետրվարյան և նրան հաջորդող իրադարձություններին և որ կարևորն է՝ կարողացել էր ճշտորեն հասկանալ և արժեքավորել տեղի ունեցած իրադարձությունների պատմա-քաղաքական իմաստը։ Ճիշտ է, նա Ոսկանյանի նման զենք կամ դրոշ չվերցրեց, բայց այս ժամանակաշրջանում միշտ դրվատանքով արտահայտվեց տեղի ունեցածի մասին։ Գաղափարական այս ընդհանրությունն էր, ահա, որը պետք է մերձեցներ մեր երկու գործիչներին, որը մի որոշ ժամանակ վերածվեց բավականին սերտ համագործակցության։

Ցավոք՝ միայն այսքան։ Փարիզի հայազգիներից հազիվ մեկ-երկուսին էլ կարելի կլինի ցույց տալ, որոնք համակրանք դրսևորեցին Ոսկանյանի վարքագծի նկատմամբ։ Իսկ նրանց գերակշիռ մասը, և դրանում շուտով համոզվեց նաև Ոսկանյանը, դիրքավորվել էին նրան ընդդեմ։

---

15 Նույն տեղում, № 5, էջ 34։

Ավելի լավ չէր դրությունը ուսումնառության բնագավառում։ 1849 թ. հավանորեն կեսերին, այսինքն շուրջ երեք տարվա վերապատրաստում անցնելուց հետո, Ոսկանյանն ավարտեց «Սենտ-Բարպը»։ Այժմ նա ավարտական վկայական ուներ, որը նրան իրավունք էր վերապահում ընդունվել Համալսարանի բժշկական ֆակուլտետը, որը և, ի վերջո, նախընտրել էր։ Սակայն «Սենտ-Բարպն» ավարտելուն պես, վարժարանի նոր տեսուչը (Ալեքսանդր Լաբրուստը ավելի բարձր պաշտոնի անցնելու կապակցությամբ ազատվել էր այդ պարտականությունից), ըստ երևույթին նաև Ոսկանյանի համար անսպասելի կերպով, ազատեց նրան նաև վերահսկիչի պարտականություններից։ Դեր խաղաց դիվանագիտությո՞ւնը՝ Ֆրանսիայի հնամենի ու պատկառազդու այդ վարժարանն ազատելու («Սենտ-Բարպը» հիմնադրվել է 1460 թվականին) և աշակերտության հեռու պահելու համար քաղաքականապես վտանգավոր մեկից, թե՞ այդպես էր կարգը, չգիտենք. հավանորեն ճիշտ է առաջին կռահումը։ Իսկ «Սենտ-Բարպից» այդպես լրիվ ազատվելը ֆինանսական ծանր վիճակի մեջ դրեց Ոսկանյանին։ Նրա միակ հույսը մնացին քաղաքի մեկերկու տներում ունեցած ֆրանսերեն դասերը, և խիստ բարդացավ բժշկական ֆակուլտետ ընդունվելու նրա գործը, որովհետև նախօրոք (և ապա պարբերաբար) պետք էր մեծ գումար մուծել։ Ներքին դառնությամբ լի տողերով այս փաստը արձանագրում է նաև «Արշալույս Արարատյանը»։ Նշելով Փարիզում գտնվող այն հայազգիներին, որոնք «անբարենպաստիկ» վիճակի մեջ են, շաբաթաթերթը հավելում է. «Օրինակի համար զմյուռնիացի Ոսկանյան պարոն Հայկ Ստեփանը (սկզբում, և մանավանդ մտերիմների շրջանում Ոսկանյանին կոչում էին Հայկ Ստեփան ձևով—Ս. Շ.) հիշատակված չէ, որ քաղաքիս սուրբ Մեսրոպյան դպրոցին վաղեմի աշակերտներեն է և երեքչորս տարի «Սենտ-Բարպի» դպրոցը գանազան ուսմանց խիստ հաջողությամբ հետևելեն ետև, այժմ դժբախտությամբ ստիպյալ է մասնավոր դասատվությամբ իր ավուր պարեներ հոգալ հիշյալ մայրաքաղաքին մեջ։ Այս քաջ հայկաբան և մաթեմաթիքայի ու գաղղիականի լեզվին մեջ առաջադեմ եռանդուն երիտասարդը չկրցավ մինչև ցայսօր ազգասեր բարերար մը գտնել, որ օգնե իրեն, որպեսզի կարող ըլլա բժշկականության հետևիլ. թեպետև կխոստանա, այս պատվական արհեստը սովրելեն ետև, հատուցանել իր բարերարին, իրեն փոխ տված դրամը»[16]։

Այս տողերը, որոնք անկասկած գրվել են Ոսկանյանի գիտությամբ, բարեբախտաբար, չմնացին անարձագանք։ Բարերարները գտնվեցին, և Ոսկանյանը շուտով սկսեց հաճախել համալսարանի բժշկական ֆակուլտետը, որտեղ և սովորեց շուրջ երկու տարի, գուցե և՝ ավելի պակաս։ Գիտելիքների այդ քանակն, իհարկե, նրան հնարավորություն չտվեց դառնալ մասնագետ-բժիշկ, ինչպես, ասենք, Ծերենցը, բայց նրան հնարավորություն տվեց կողմնորոշվելու բժշկության տեսության հետ առնչվող մեկից ավելի հանգուցային հարցերում. մի բան, որի մասին վկայում է հենց ինքը։ «Ես ժամանակավ,—գրում էր Ոսկանյանը,— քիչ մը բուժական արհեստին հետևեր եմ մարդուն կազմը հասկնալու, բան թե մարմինը դարմանելու համար»[17]։

---

16 «Արշալույս Արարատյան», 1850, № 378։

17 «Արևմուտք», 1859, № 7, էջ 52։

«Մարդուն կազմը հասկնալու» սահմաններում գիտելիքներ ունենալն, իհարկե, վերջնական նպատակ լինել չէր կարող Ոսկանյանի համար, իսկ ուսումը շարունակելը Համալսարանում, որը հնուց հայտնի էր իր պահպանողական բնույթով և որտեղից, նույնիսկ 1860-ական թթ. հեռացնում էին ականավոր պրոֆեսորներին միայն այն բանի համար, որ նրանք համակրանքով էին արտահայտվել 1848 թ. ֆրանսիական հեղափոխության մասին, ավելի ու ավելի դժվար էր դառնում։ Միակ հույսը մնում էր Սորբոնը, որը թե՛ անհամեմատ ավելի դեմոկրատական բնույթ ուներ, և թե՛ շատ փոքր վարձ էր վերցնում սովորողներից։ Այստեղ էլ շարունակեց իր ուսումը Ոսկանյանը (հավանորեն՝ բժշկական ֆակուլտետում սովորելու հետ միաժամանակ) և այստեղ էր, որ նա աշակերտեց Ժյուլ Սիմոնին և Վիկտոր Կուզենին։ Ժյուլ Սիմոնը, որը Սորբոնի հասարակագիտական ֆակուլտետն էր հրավիրվել փիլիսոփայություն դասավանդելու համար և Վիկտոր Կուզենը, որը նույն հասարակագիտական ֆակուլտետում դասական շրջանի փիլիսոփայություն էր ավանդում, օգնում են մեզ ճշտելու, թե Սորբոնի որ ֆակուլտետում էր, որ իր բարձրագույն ուսումը ստացավ Ոսկանյանը։ Իսկ ուսանելը և մանավանդ՝ հնարավորության սահմաններում արագ ավարտելը շատ անհրաժեշտ էր, որովհետև Ֆրանսիայում զարգացող քաղաքական դեպքերը ոչ մի բարի բան չէին գուշակում Ոսկանյանի համար։

Ամեն ինչ սկսվեց այն բանից հետո, երբ միջակ խելքի, միջակ կարողությունների, ռազմական ու կազմակերպչական շատ համեստ ունակությունների տեր Լուի Նապոլեոնը, «իր զզվելիորեն գռեհիկ դեմքը մահացած Նապոլեոնի դիմակով քողարկվող այդ ավանտյուրիստը»[18], անձնավորություն, որի քաղաքական կապիտալը միայն այն էր, որ կրում էր Բոնապարտ ազգանունը, 1851 թ. կարողացավ պետական հեղաշրջում կատարել և իրեն հայտարարել Ֆրանսիայի պրեզիդենտ։ Ծայր առան և հետևողականորեն իրագործվեցին այնպիսի խստություններ, որոնք աննախադեպ էին Ֆրանսիայի պատմության մեջ։ Նախ՝ պրեզիդենտ դառնալու հենց առաջին օրը, դեկտեմբերի 2-ին, արգելվեցին «Նասիոնալ» և «Ռեֆորմ» թերթերը, այն պատճառաբանությամբ, որ նրանք ժողովրդին գրգռում են պետության ու թագավորի դեմ. պատճառաբանություն, որը մի անգամ ևս վկայում է, թե 1840-ական թթ. դեպքերի ժամանակ քաղաքական ինչպիսի կողմնորոշում ունեին այդ երկու պարբերականները։ Այնուհետև տեղի ունեցավ Օրենսդիր ժողովի ցրումը և դեպուտատների մի մասի ձերբակալությունը։ Դրան հաջորդեց պարբերական մամուլն ու հրատարակությունները պրեզիդենտի լիակատար ու միանձնյա տնօրինության ներքո դնելու մասին օրենքի ընդունումը։ Դրան էլ հաջորդեց բարձրագույն ուսումնական հաստատություններից հանրապետական հայացքներ ունեցող պրոֆեսոր-դասախոսների մասսայական արտաքսումը (այդ պատրվակով էլ հեռացվեցին Ժյուլ Սիմոնն ու Վիկտոր Կուզենը, քիչ ավելի ուշ՝ Ժյուլ Միշլեն, Էդգար Կինյեն ու Ադամ Միցկևիչը)։ 1852 թ. պրեզիդենտը նշանավորեց սոցիալիզմի բոլոր՝ քիչ թե շատ ականավոր ներկայացուցիչներին երկրից արտաքսելու մասին դեկրետի հրապարակումով։ Այնուհետև ծայր առավ

[18] К. Маркс, Восемнадцатое Брюмера Луи Бонапарта, К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 8, М., 1957, стр. 121.

1848 թ. դեպքերին մասնակցած անձանց նկատմամբ զանազան խստություններ ու կալանք կիրառելու լայն շարժումը և այլն։

Իր բնական խորաթափանցությամբ Ոսկանյանն զգաց, որ այս ամենը ոչ մի լավ բանով չի կարող վերջանալ իր համար։ Եվ երբ տապալվեցին ազատագրվելու վերջին հույսերն էլ, այսինքն երբ պրեզիդենտ Լուի Նապոլեոնը ոչ միայն կարողացավ ճնշել իր դեմ կազմակերպված 1851 թ. դեկտեմբերի 3—4-ի, 1852 թ. կեսերի ապստամբությունները, այլև 1852 թ. դեկտեմբերի 2-ին Նապոլեոն III անվամբ հռչակվեց Ֆրանսիայի թագավոր, Ոսկանյանի համար վերջնականապես պարզ դարձավ, որ այսուհետև էլ ավելի մեծ չափերով կշարունակվեն խստությունները և որ հերթը, ի վերջո, կհասնի նաև իրեն։

Նապոլեոն III-ի Ֆրանսիայի թագավոր ընտրվելուց մի քանի օր առաջ Ոսկանյանը ավարտեց Սորբոնի հասարակագիտական ֆակուլտետը, ստանալով «գիտության և դպրության պսակավորի աստիճան» և անհապաղ հեռացավ Փարիզից դեպի հայրենի եզերքները։

ПАРИЖСКИЙ ЭТАП ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ Ст. ВОСКАНЯНА

С. А. ШТИКЯН

(Резюме)

Одно из «белых пятен» в биографии известного армянского публициста Степана Восканяна (1825—1901) — это его шестигодичная деятельность (1846—1852) в Париже.

Осенью 1846 г., приехав в Париж, Восканян начинает сотрудничать в парижских газетах демократического направления «Насиональ» и «Реформ». В этот период и оформляется Восканян-публицист. Во время февральской революции 1848 г. в первых рядах восставших был и Восканян, который с оружием в руках участвовал во взятии королевского дворца Тюильри. Через год, в июне 1849 г., в Париже опять вспыхивает восстание, и снова в рядах восставших Восканян. На сей раз он подвергается двухмесячному аресту. После освобождения, в период жестокой реакции, когда новый король Франции Наполеон III чинил расправу над теми, кто проявлял хоть малейшую симпатию к идеям и событиям 1840-х годов, Восканян покидает пределы Франции.